«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Սաթենիկ Սմբատյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի N 8 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

Հիմնական մաս 4

ԳԼՈՒԽ 1. ԳԻՏԵԼԻՔԸ՝ ՈՐՊԵՍ ԽՏԱՑՎԱԾ ՓՈՐՁ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՔ 4

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ և ԴՊՐՈՑԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 5

ԳԼՈՒԽ 3.ՄԱՅՐԵՆԻԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 6

ԳԼՈՒԽ 4. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՂ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ 7

Ա. Գրականությունը՝ դեռահասի ամենամոտ ընկեր 7

Բ. Գրականությունը՝ աշակերտի ստեղծագործական մտքի, արժեհամակարգի ձեվավորման աղբյուր 8

Գ. ԻՆՍ ունակությունները ազգայինը բացահայտելու եւ գնահատելու միջոց գրականության դասաժամերին 8

ԳԼՈՒԽ 5. ԻՆՍ ունակությունները հայրենասիրությունը բացահայտելու գործում 9

Ա. Հայրենիքը՝ որպես բացարձակ արժեք 9

Բ. Հայրենասիրության գաղափարի համակողմանի քննարկումը մեծերի մասնակցությամբ ..- 11 -

ԳԼՈՒԽ 6. ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ա. Թեմաների պատկերավոր ընկալումն ու մեկնաբանումը հայոց լեզվի ժամերին ..... - 12 -

Բ. Հայոց լեզվի դասավանդումը գծապատկերների, սիմվոլների միջոցով ..... - 15 -

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... - 16 -

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... - 17 -

ՀԱՎԵԼՎԱԾ ..... - 47 -

Ներածություն

Այսօր մենք բարդ ժամանակներ ենք ապրում, և ոչ ոք ու ոչինչ չի կարող խուսափել օրհասական խնդիրներին բախվելուց։ Փորձությունների այս թատերաբեմում առաջինը հայտնվում է դպրոցը։ Իսկ դպրոցը նախ և առաջ պետության հիմքն է։ Կրթված քաղաքացին՝ հզոր պետություն ունենալու գրավականը։ Իհարկե , այստեղ տեղին կլինի հիշել 5-րդ դարի հայ պատմիչ Եղիշեի խոսքերը.<<Տվեք ինձ կիրթ և խելացի մայրեր , ես ձեզ կտամ կիրթ ու խելացի հասարակություն>>։ Այսինքն՝ տակավին ընտանիքում են ձևավորվում դպրոցի սերմերը։ Բայց, այնուամենայնիվ, հիմնական ծանրությունը դպրոցի վրա է։ Այստեղ է աճող սերունդը համակողմանի գիտելիքներ ստանում, որպեսզի դրանք հետո կարողանա կիրառել։ Այստեղ է ձևավորվում երկրի ապագան կերտողի արժեհամակարգը։ Ինչպիսի՞ն են այդ գործընթացի ձեռքբերումները և կկարողանա՞ն արդյոք դիմակայել ժամանակի մարտահարավերներին. դժվար է պատասխանել միանշանակ։ Այսօր, առավել քան երբևէ, բոլորս ենք խճճվել։ Աղաղակող կոչերի մեջ ճիշտն ու սխալը հաճախ տարբերել չենք կարողանում։ Այս պարագայում թերևս ամենախելամիտ մոտեցումը ինքնուրույն, բայց գրագետ վերլուծություններ անելն է, սեփական կարծիքով առաջնորդվելը։ Դրա համար արդեն պետք է հենվել դպրոցի՝ իր գործառույթների շրջանակներում ստեղծած պատվարին։

Եվ, այո՛, այդ հարթակում անգնահատելի է հայոց լեզվի և գրականության դերը։ Գրականության ուսուցիչը հնարավորություն ունի առարկայի դասավանդման ընթացքում ներգործել աշակերտների ճանաչողական ունակությունների վրա , նրանց մեջ զարգացնել սեփական վերլուծությունը կատարելու նախաձեռնություն, բացահայտել և խթանել ստեղծագործական ունակությունները և ստացած գիտելիքները կյանքում ըստ նպատակի օգտագործելու հմտությունները։

Բարոյական բարձր չափանիշներով և խոր գիտելիքներով օժտված խիզախ սերունդը անկասկած կարող է դառնալ ուժեղ պետության հիմք և ստեղծել

անկախ և հզոր հայրենիք, որտեղ կտնօրինեն ազատությունն ու արդարությունը, և կթևածի երջանկությունը։

Նպատակները - Սույն աշխատանքը միտված է հայոց լեզվի և գրականության դասաժամերին աշակերտների մոտ ստեղծագործական մտքի և ինքնուրույն վերլուծություններ կատարելու ունակությունները (այսուհետ՝ԻՆՍ ունակություններ) զարգացնելուն։

Խնդիրները - Այս նպատակին հասնելու համար սույն աշխատանքը անդրադառնում է հետևյալ խնդիրներին.

- Ստեղծել անկաշկանդ մթնոլորտ ինքնաարտահայտվելու համար
- Խրախուսել սխալների վրա սովորելու պրակտիկան
- Ներգրավվել սովորողներին դասի կազմակերպման գործում
- Խրախուսել պատկերավոր մտածելու և ստեղծագործելու փորձերը
- Կիրառել գծապատկերներ և սիմվոլներ նյութը ավելի տեսանելի դարձնելու համար
- Խթանել հետազոտական հմտությունների ձեռքբերումը
- Նպաստել դասապրոցեսի ընթացքում միասնական, համախմբված, ապրումակցային միջավայրի ձևավորմանը

ԳԼՈՒԽ 1.

ԳԻՏԵԼԻՔԸ՝ ՈՐՊԵՍ ԽՏԱՑՎԱԾ ՓՈՐՁ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՔ

Մեր օրերում ժամանակը թռչում է անչափ արագ, և մի պահ նրա ռիթմից շեղվելու դեպքում այլևս դժվար է հետևից հասնել: Մինչ աշխարհը կշարունակի իր առաջընթացը, հետևում մնացողը կդառնա սոսկ ինչ-որ մեկի, ինչ-որ բանի կրկնօրինակը կամ կցորդը: Այլևս նպատակը դառնալու է ողջ ջանքն ու եռանդը գործադրել ժամանակի հետևից հասնելու համար, որպեսզի գոնե չկորչի, չմոլորվի խելացնոր խաչմերուկներում: Բայց ախր մարդը՝ Աստծու ստեղծած գլուխգործոցը, արարվել է ոչ թե գոյատևելու, սոսկ ապրելու համար, այլ երջանի՛կ ապրելու համար: Անշուշտ , յուրաքանչյուրի համար երջանկության չափանիշները տարբեր են, բայց վերջնարդյունքում հաղթողը ներդաշնակությունն է: Ոչինչ չի տրվում հենց այնպես, մանավանդ երջանկությունը: Ինչ-որ բանի հասնելու համար պետք է ջանք թափել, բայց խելամտորեն: Եվ այստեղ է, որ անհրաժեշտ է ունենալ գիտելիքի պաշար: Սակայն ինչպես Գյոթեն է ասում. <<Գիտելիքը քիչ է, հարկավոր է նաև գործել>>: Իսկ անգլիացի փիլիսոփա Կարլեյլը հավելում է. <<Գիտելիքը գրանցված փորձ է>>: Ահա այդ փորձը իբրև դասագիրք, իբրև ծրագրային թեմա մատուցվում է աշակերտներին: Այդ գրանցված փորձը օգնում է մարդուն կյանքում ճիշտ ընտրություններ կատարել և ներդաշնակ ապրել շրջապատի և ինքն իր հետ:

ԳԼՈՒԽ 2.

ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մերօրյա աշակերտների հնարավորությունները և հմտությունները անսահմանափակ են, և շատերն արդեն բազմաթիվ բաց հարթակներից գտել են իրենց հետաքրքրությունների պատասխանները, գիտելիքների՝ իրենց ինքնատիպ պաշարն ունեն (գուցե նույնիսկ ոչ հավաստի): Դրանք պետք է ճիշտ դասդասել,

ուղղորդել, իսկ երբեմն էլ կարծրացած մոտեցումները ձևափոխել։ Այստեղ է, որ շատ որոշիչ և պատասխանատու է դպրոցի, ուսուցչի դերը։ Ուսուցիչը ճշմարտության և իր արժեհամակարգի դիտանկյունից պետք է անդրադառնա և արդարացի վերլուծության ենթարկի սովորողի մոտ առկա կրթադաստիարակչական ցանկացած երևույթ։ Անշուշտ, չպետք է շրջանցել ազատ մտքի արտահայտման և հանդուրժողականության միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը։ Աշակերտն էլ իր հերթին պետք է գիտակցի սեփական կարծիք ունենալու անհրաժեշտությունը, կարողանա մտքի ճկունություն դրսևորել և ինքնաքննադատության լույսի ներքո բացահայտել իր սխալները։ Դեռևս Ցիցերոնն է մ.թ.ա. մոտ 80-ին ասել. <<Մարդիկ հակված են սխալվելու։ Բայց միայն հիմարն է պնդում իր սխալի վրա>>։ Ուսուցչի և աշակերտների համատեղ աշխատանքը ի վերջո կհանգեցնի ցանկալի արդյունքի։ Իսկ մինչ այդ (մինչ այս փուլը) դեռ պետք է սովորողների մեջ ինքնուրույն մտածելու, վերլուծություններ անելու և ստեղծագործելու ունակություններ զարգացնել։

Անշուշտ կա մտավախություն, թե արդյո՞ք բոլորին է տրված վերլուծական միտքը կամ ստեղծագործելու կարողությունը. չէ՞ որ յուրաքանչյուր մարդ ծնվում է որպես անկրկնելի անհատականություն։ Որպես պատասխան կարելի է մեջբերել հումանիստական տեսության հիմնադիր Ա. Ադլերի խոսքը. <<Երեխաները ծնվում են ինչպես մաքուր, սպիտակ թուղթ։ Ինչ նրանց վրա գրես, այն էլ հետագայում կկարդացվի նրանց վարքագծում>>։ Այսինքն՝ երեխան իհարկե պատրաստ է ընկալելու, յուրացնելու և ստեղծագործաբար վերարտադրելու թե՛ մատուցված ծրագրային նյութերը, թե՛ սերմանած արժեքները։ Այստեղ իր խոսքն ունի ասելու դպրոցը, ավելին՝ անգնահատելի է նրա առաքելությունը։

Դպրոցը աշակերտներին հնարավորություն է տալիս դասընթացը համակողմանի ընկալել, նպաստում է պատկերավոր մտածելակերպ ձևավորելուն և հանդուրժողական մթնոլորտում ստեղծագործաբար, ազատ ու անկաշկանդ իր գիտելիքը ներկայացնելուն, սեփական բացահայտումները կատարելուն. աշակերտն

արդեն իր տեղում է, իր ներդաշնակ, բնականոն աշխարհում։ Այսպիսի առաջին կենսական անհրաժեշտությունները ապահոված միջավայրում է՛լ ավելի կամրապնդվի համերաշխության մթնոլորտը, միասնականությունն ու փոխկապվածությունը, և հարգանքը միմյանց նկատմամբ կդառնա գերակա արժեք։ Աշակերտի համար սովորելը կդառնա հաճույք։ Այլևս նա երջանիկ է։ Ինքնուրույն վերլուծությունների արդյունքում հաստատ կգա եզրահանգման, որ սովորում է նախ հենց իր համար։ Այսինքն՝ ինքնուրույն կբացահայտի դպրոցի և կրթության անհրաժեշտությունն ու դրանց բացարձակ արժեք լինելը։

ԳԼՈՒԽ 3.

Մայրենիի հնարավորությունները և առավելությունները երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում

Դպրոցում դասավանդվող ցանկացած առարկա ծրագրային թեմաներից զատ իր խորքերում գեղագիտական արժեքների ձևավորման և բարոյահոգեբանական դաս տիարակության մեծ ներուժ ունի։ Հմուտ և պրպտող ուսուցիչը գտնում է իր առարկայի և արժեհամակարգի միջև առկա խորքային կապերը։ Կան առարկաներ և թեմաներ էլ, որոնք ուղղակիորեն միտված են աճող սերնդի մեջ կենսական բարձր արժեքներ սերմանելուն։

Մայրենին՝ որպես առարկա, այդ տեսակետից ունի լայն հնարավորություններ աշակերտներին բացահայտում ների ճանապարհով տանելու համար։ Դասաժամերի ընթացքում դպրոցականին առաջադրվում են նոր գործիքակազմեր՝ ճանաչելու աշխարհը, մարդկանց և հե նց իրեն։ Այս

կերպ դպրոցական վաղ տարիքից արդեն դրվում են աշակերտի հետազոտական հմտության ձևավորման հիմքերը: Ճիշտ է, այսօրվա դպրոցականը այնքան էլ Ջոն Լոքի ասած <<անգրել գրատախտակը>> չէ, և, անտարակույս, խմբագրելու անհրաժեշտություն է առաջանում: Ուստի շատ կարևոր է դեռ փոքր տարիքից ուղղորդել նրա լեզվամտածողության ճիշտ զարգացումը, նպաստել մտավոր թռիչքներին, խրախուսել ստեղծագործական ունակություններ ը, և վերջապես, նրան տալ ինքնարժևորման բանալին և հընթացս հետևել ու օգնել, որ նա դրանով ճիշտ դռներ բացի, որ ձևավորվի որպես գրագետ և կիրթ անհատականություն: Պատահական չէ, որ հայոց լեզուն և գրականությունը, լինելով առանձին առարկաներ, ցածր դասարաններում ինտեգրված են <<Մայրենի>> առարկայի մեջ և ընկալվում են որպես մեկ ամբողջություն: Աշակերտը, արդեն զինված որոշակի գիտելիքներ ով ու կարողություններով, 7-12-րդ դասարաններում տարանջատված է ուսումնասիրում այդ առարկաները:

ԳԼՈՒԽ 4.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՂ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Ա. Գրականությունը՝ դեռահասի ամենամոտ ընկեր

Գրականությունը ստեղծվել և ապրում է մարդկության հետ՝ սկզբում բանավոր տեսքով, ապա՝ գրի ստեղծումից հետո՝ նաև գրավոր: Հզոր է գրականության դերն ու նշանակությունը մարդկության համար: Անվերջ կարելի է օրինակներով փաստել ...

Մարդը հասարակական էակ է, նրա մի մասնիկը, և թվում է՝ երբեք միայնակ լինել չի կարող։ Սակայն հատկապես դեռահասության շրջանում շատ աշակերտներ հաճախ են ընկնում մենակության գիրկը ու կտրվում են իրական կյանքից։ Նրանք ամփոփվում են իրենց աշխարհում և ամենափոքր բախումից անգամ մեծ ցնցում են ապրում։ Թվում է, թե ողջ տիեզեիքում մենակ են՝ իրենք իրենց հետ, իրենց հույզերի հետ. մի՞թե կա ավելի տխուր բան, քան միայնակ մարդը … Այստեղ է, որ պրպտող ու նախաձեռնող աշակերտին օգնության կհասնի մեծն ***գրականությունը*** ։ Դասապրոցեսում և դրանից դուրս, գրականության մեջ փնտրելով իր հույզերի պատասխանը, ստեղծագործող միտք ունեցող աշակերտը հաստատ կգտնի տողեր, որ կթվա, թե հենց իր սրտից են բխում։ Ավելի խորանալով և ինքնուրույն վերլուծություններ անելով՝ տողատակերում կբացահայտի պատասխանները։ Եվ կհամոզվի, որ ինքը մենակ չէ և երբեք էլ մենակ չի լինի։ Ավելին, կտեսնի կյանքն ու աշխարհը նոր լույսի ներքո և կգնահատի ու կարժևորի կյանքը։ Ու անընդգրկելի տիեզերքում իր աշխարհը կգտնի՝ իր երազանքների մոլորակը։ Հենց ա՛յս է գրականության մոգական ուժը։

Բ. Գրականությունը՝ աշակերտի ստեղծագործական մտքի, արժեհամակարգի ձևավորման աղբյուր

Ի համեմատություն մյուս առարկաների՝ գրականությունը արվեստ է, ավել ին՝ արվեստների մայր։ Իբրև առանձին դասավանդվող առարկա՝ այն լայն հորիզոններ է բացում դասարանի առջև, փորձում է գեղարվեստը ձուլել աճող սերնդի մեջ։
Նոր շունչ է հաղորդում հատկապես ստեղծագործող միտք ունեցող (կամ ձեռք բերած) աշակերտներին։
Նաև անհրաժեշտություն է դառնում ստեղծել ազնիվ միջավայր և ձևավորել մ տերմիկ դաշտ, որտեղ մեկը մյուսի հույզերին հաղորդակից կլինի։

Ապրումակցումը ավելի կմտերմացնի համադասարանցիներին, և անկաշկանդ արտահայտվելու ցանկություն կունենան բոլորը։ Այլևս բոլորն են ստեղծագործող։ Նրանք պատրաստ են գնահատել մարդկային արժեքները, բացահայտել իրենցը, նվաճել մինչ այդ անծանոթ հորիզոններ, զուգահեռներ տանել գրականության և կյանքի միջև։ Տեղին է հիշել Նար-Դոսի խոսքը. <<Իրավ է, գրականությունը կյանքի հայելին է, բայց նա կյանքի դպրոցն էլ է>>։

Գ. ԻՆՍ ունակությունները ազգայինը բացահայտելու եւ գնահատելու միջոց գրականության դասաժամերին

Գեղարվեստական գրականության մեջ համամարդկային բազմաթիվ թեմաներ են արծարծվում։ Դպրոցական դասաժամերի ընթացքում անդրադառնում ենք հիմնականներին, և յուրաքանչյուր աշակերտ, իր տարիքին համապատասխան, ձեռք է բերում դրանց խորքերը թափանցելու, մեկնաբանելու կարողություններ։ Բայց այդ համամարդկային թեմաների կողքին հստակ զատորոշվում և արժևորվում են զուտ ազգային՝ հայկական թեմաները՝ իրենց նրբերանգներով և յուրահատկություններով։ Հատկապես խոցելի է պանդխտության թեման։ Այն ցավոտ է, ինչպես մեր պատմությունը, մեր թախծոտ երաժշտությունը։

Պանդխտությունը խոր ակունքներ ունի ու, ցավոք, նաև արդիական է։ Բոլորս ենք անշուշտ բախվում այդ խնդրին, բայց դպրոցականի զգայուն հոգին դրան առնչվելիս մեծ դրամա է ապրում։ Ուստի այդ թեմաները անցնելիս շատ կարևոր է, որ ճիշտ մեկնաբանվեն պատճառներն ու հետևանքները և քննարկվեն դրանց կանխարգելիչ տարբերակները։ Այս պարագայում անհրաժեշտ է, որ որպես ինքնուրույն մտածող անհատականություն ձևավորված աշակերտը ասի իր փաստարկված խոսքը։ Այս՝ հայ ժողովրդի համար ասես ճակատագիր դարձած ցավոտ թեման ամփոփելով, այնուամենայնիվ, աշակերտների մեջ պետք է պահել

լավատեսական ոգին և հանգեցնել այն մտքին, որ եթե տարագրությունն այսօր էլ շարունակվում է, ու կանգնեցնել դեռ չի լինում, ուրեմն պետք է ընդունենք, որ ամենատարբեր ժամանակներում աշխարհով մեկ սփռված հայությունը, որ այսօր հստակ անուն ունի՝ Սփյուռք, մեր ազգի հարստությունն է։

ԳԼՈՒԽ 5.

ԻՆՍ ունակությունները հայրենասիրությունը բացահայտելու գործում

Ա.Հայրենիքը՝ որպես բացարձակ արժեք

Կան համամարդկային թեմաներ, որոնք հայերիս համար դարձել են ազգային։ Այդպիսին է հայրենիքի թեման։ Ցանկացած ազգի ներկայացուցիչ իր հայրենիքի մասին արտահայտվում է խոր պատկառանքով։ Կարելի է բազմաթիվ խոսքեր հիշել։ Ն. Բոնապարտն, օրինակ, ասել է .<<Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է>>։

Հայերիս համար, անտարակույս, հայրենիքը բացարձակ արժեք է, բայց այն նուրբ ազգային երանգներ ունի, և հայրենասիրությունը սոսկ հայրենիքը սիրելը չէ. հայրենիքը, պետությունը պահելն ու պահպանելն է։ Մենք հպարտությամբ խոսում ենք մեր երբեմնի բիբլիական բնօրրանի մասին ու ցավոտ մի սիրով՝ այսօրվա երկյուղած, փոքրիկ Հայաստանի մասին։ Մեծ հայը՝ Թումանյանը, այսօր էլ ասում է. <<Անկարելի է չսիրել հայրենիքը, ինչ էլ որ նա լինի>>։ Ռուս գրող Տուրգենևն էլ հավելում է. <<Հայրենիքից դուրս երջանկություն չկա>>, և շարունակում, որ <<յուրաքանչյուր ոք արմատներ պետք է գցի հարազատ հողում>>։ Ցավոք, շատ հայեր, պատմության թելադրանքով կամ ճակատագրի բերումով, սփռվել են աշխարհով մեկ և արմատները գցել են օտար հողերում։ Եվ ***սփյուռք*** բառը, լինելով հասարակ անուն, մեզ համար դարձել է մեծատառով. դրանով, կարծում եմ, ամեն ինչ է ասված։ Սփյուռքի համար հայրենիքը կարոտն է։ Այսօր անհրաժեշտություն է, որ աշխարհասփյուռ հայերը վերադառնան Հայաստան։ Մայր

հայրենիքը երջանիկ, ուժեղ և անպարտ կլինի , երբ զավակները հավաքվեն , համախմբվեն իր գրկում։

Բ. Հայրենասիրության գաղափարի համակողմանի քննարկումը մեծերի մասնակցությամբ

Հայ ժաղովրդի տարեգրության էջերում, ասես որպես անխուսափելի փորձություն, պարբերաբար կախվել է լինել-չլինելու հարցականը։ Դեռևս 5-րդ դ. Խորենացու <<Հայոց պատմության>> մեջ առանցքային գիծը հայրենասիրությունն էր՝ որպես պետականության ձգտում։ Այսօր դարձյալ նույն ոլորանին ենք կանգնած, իսկ հայրենասիրության գաղափարը զարմանալիորեն նոր շեշտադրումներ է ստացել՝ հաճախ իրար հակասող, հատկապես, երբ մերժելիորեն քաղաքականացվում է։ Բարձրագոչ ուղերձների թնջուկում տարակուսած՝ պատանիների երերուն մտքերը կարող են մոլորվել։ Այստեղ, իրարկե, առաջիններից մեկը օգնության կգա գրականության ուսուցիչը. չէ՞ որ գրականության ողջ դասընթացի ընթացքում կարմիր թելի պես ձգվում է հայրենասիրության գաղափարը։ Իր սաներին ուղղորդելով գրականության ու նաև մեր պատմության տված դասերով՝ հնարավորություն կստեղծի, որ աշակերտն ինքնուրույն մեկնաբանի, թե ինչ է հայրենասիրությունը ընդհանրապես և իր համար, ի՞նչ է անում ինքը իր հայրենիքի համար ։ Հաճախ ,որպես կանոն, աչքի առաջ ունենալով թարմ օրինակներ, երդումի նման , տաքարյուն պատանիները բարձրաձայնում են, որ պատրաստ են կյանքը տալ հանուն հայրենիքի ։ Ասես Նժդեհի պատգամով են առաջնորդվում՝ << Որպեսզի ցեղդ և հայրենիքդ ապրեն, նրանց համար մեռնելու ***կամք ունեցիր***>> ։Իհարկե, օրհասական պահերին, կռվի դաշտում կյանքն է դառնում հայրենիքի գինը, բայց աշակերները իրենց խորազնին քննարկումների արդյունքում պետք է հասնեն այն գիտակցության, որ հայրենասիրությունը միայն կռվի դաշտում , կյանքը զոհելով չի արտահայտվում։ Վ. Պետրոսյանի կարճ, բայց իմաստալից խոսքում ամեն ինչ ասված է.<<Հայրենասիրությունը պարտք է, ամենօրյա հերոսություն, հաճախ՝ անանուն…>>։

Այո՛, մեր հայրենիքը աստվածային պարգև է, և ոչինչ չի կարելի խնայել նրա համար, բայց չպետք է մոռանալ նաև, որ հայրենիքը ապրում է իր զավակներով. նրանց կյանքը անգին է, և ամեն մեկի կորուստը թուլացնում է հայրենիքի հիմքերը։

Գրականության դասաժամերին աշակերտի մոտ պետք է ձևավորվի այն համոզմունքը, որ հենց իրենից է սկսվում հայրենիքը, որ յուրաքանչյուրիցս է կախված մեր երկրի ապագան, մեր համերաշխ ընտանիքից, դասարանից ,միջավայից, անձնական շահը ազգայինին ստորադասող հասարակությունից, միասնական ազգից ու գաղափարախոսությունից։Չարենցը այսօր էլ աղաղակում է. <<Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է >>։

Այո՛, մեր հայրենիքին այսօր անհրաժեշտ է հայրենասեր, անձնազոհ, արարող և ստեղագործող սերունդ և ամենակարևորը՝ միասնական գաղափարախոսություն և հավաքական ուժ։

Դրա արմատները դպրոցում են ։

ԳԼՈՒԽ 6.

ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ա. Թեմաների պատկերավոր ընկալումն ու մեկնաբանումը հայոց լեզվի ժամերին

Թվում է, թե ոչ բոլոր առարկաները կամ թեմաները հնարավորություն ունեն պատկերավոր ներկայացվելու, և որ դրանք չեն ակնկալում ստեղծագործական ունակությունների առկայություն։ Բայց ուսուցչի խնդիրը հենց այն է, որ, գործածելով ամենատարբեր մեթոդներ ու միջոցներ,միջառարկայական կապեր, ցանկացած թեմա բերի հետաքրքրությունների դաշտ և աշակերտներին մղի բացահայտումների, նրանց մեջ ինքնուրույն մտածելու, սովորելու ինքնաբուխ ցանկություն առաջացնի։

Հայոց լեզվից դիտարկենք, օրինակ, <<Բայի ժամանակները>> թեման։ Ինչու՞ ընտրեցի հենց այս թեման. թերևս այն պատճառով, որ համամիտ եմ շատ խորագետների կարծիքին, թե ժամանակը ամենամեծ հարստությունն է, ամենաթանկ գանձը, և այն պետք է ճիշտ տնօրինել։ Ժողովուրդի խոսքով էլ՝ <<Ժամանակը ոսկի է>>։

Թեման կարելի բացել հ. լեզվից անբաժան գրականության շնչով. <<Առ քո թևերին, տա՛ր ինձ , ժամանակ…>>։ Աշակերտները անշուշտ գիտեն և կարող են ներկայացնել ժամանակի մասին մտքեր, բանաստեղծություններ։ Սահուն անցնում ենք քերականությանը։ Նախ սովորողները բայի ժամանակների մասին ասում են իրենց իմացածը։ Ապա հնչեցված կանոնները փորձում են վերածել պատկերների։ Բառերի իմաստները քննելիս խորքերում բացահայտում են թաքնված ենթատեքստեր։Այն, ինչ առաջին հայացքից այնքան պարզ էր թվում, համակողմանի մեկնաբանությունների, քննարկումների բաց դաշտում անգամ բարոյահոգեբանական շեշտադրումներ է ստանում (յուրաքանչյուր աշակերտ մի քիչ փիլիսոփա է. դա ես հաստատ գիտեմ)։ Ծավալված բազմաբովանդակ մտքերից, ստեղծված իրավիճակներից փորձենք դուրս բերել ընդհանրացված մի փոքրիկ պատկեր։ Դա կլինի մոտավորապես հետևյալը։ Աշակերտներին հանձնարարվում է իրենց համար կարևոր որևէ արժեքի մասին խոսել և մեկնաբանել, թե դա ժամանակային ո՛ր տիրույթում է դիտում։ Բոլորը անկաշկանդ, հանպատրաստից սկսում են արտահայտվել և մտքեր փոխանակել։ Բերված օրինակներում գերակշռողը անցյալն էր։ Ապա՝ ապառնին (ապագան), և վերջում՝ ներկան (այս պահը կարելի է հիշել նաև սահմանական եղանակի ժամանակաձևերը անցնելիս) ։ Ասվածները ընդհանրացնելով՝ համոզվում ենք, որ, այո՛, բայն ունի երեք ժամանակ, և դրանցից ամենաարագ թռչողը և վաղանցիկը ներկան է։ Ժամանակն ինքը սրընթաց մի վեկտոր է, որին կանգնեցնել հնարավոր չէ. սլաքը ձգվու՛մ է, ու վերջը չի երևում։ Անհայտ է նրա սկիզբը։ Որոշների կարծիքով այն սկսվում է այնտեղից, որտեղից սկսվում է մարդկության հիշողությունը, մյուսները այլ կարծիքի են՝ վկայակոչելով ***Աստվածաշունչը:*** Բայց բոլորը միակարծիք են , որ

ժամանակը անսահման է, անընդգրկելի, ինչպես տիեզերքը։ Անիմանալի է ապագան՝ (ապառնին) , անորոշ է՝ անթիվ-անհամար ակնկալիքներով, նպատակներով, երազանքներով։ Իսկ ներկա՞ն…ներկան այդ անսկիզբ ու անվերջ տիրույթում մի ակնթարթ է միայն, մի պահ. այս պահը՝ հիմա, հենց հիմա, երբ գրում ենք, կարդում, մտածում։ Կանգ առնենք մի պահ.. .Թռաաաավ, վայրկյաններ առաջվա **ներկան** հիմա անցյալ է. ա՛յս պահի համար արդեն անցյալ է։ Նա գնաց՝ խառնվելու անցյալի քարացած հավերժությանը։ Եվ ինչպիսի՜ արագությամբ…

Կարելի է դեռ ընկնել պատկերների գիրկը, շատ մտքերով հաղորդակցվել, բայց չենք մոռանում, որ, որքան էլ խելացի, այնուամենայնիվ, գործ ունենք 7-րդ դասարանցիների հետ։

Եվ, սահմանափակվելով, ի մի ենք բերում հնչեցված հետաքրքիր դատողությունները։ **Անցյալը** մնացել է հետևում, այն մեր հիշողությունների շղթան է։ <<Հիշողության մեջ ես, ուրեմն վառվում ես, մարդ ես, հաշիվներ ունես, անհանգիստ ես…>>,- մենք էլ հիշում ենք Հր. Մաթևոսյանի՝ կյանքի փորձ ունեցող հերոսուհու խոսքերը։ Բայց այնտեղ չի կարելի երկար մնալ, այլապես բաց կթողնենք ներկան և ապա՝ ապագան ։

Ներկան ժամանակատարածքային անընդգրկուն տիրույթում ամենակարճ կյանքն ունի՝ վայրկյաններ, ուստի պետք է հասցնել ճիշտ տնօրինել, լիարժեք ապրել։ Անհրաժեշտ է գնահատել ներկան, որովհետև այն **ապառնիի**՝ մեր ցանկալի ապագայի հիմքն է։ Ա. Ֆրանսի խոսքերով ամբողջացնենք ասելիքը.<< Գալիքը ներկայում է, բայց նաև անցյալում է։ Այդ մենք ենք նրան ստեղծում։ Եթե այն վատն է, ապա մեղքը մերն է>>։

Այսպիսով, ***բայն*** ունի երեք ժամանակ , բայց դրանք միայն քերականական ժամանականեր չեն։ Սրանք մեր կյանքի փուլերն են, և յուրաքանչյուրը թելադրում է իր պահանջները և ակնկալիքներ ունի։ Ըստ արժանվույն պետք է գնահատել բոլորն էլ, ներկան՝ հատկապես։ Ժամանակների հաջորդականությունը աշխարհի բնականոն ընթացքն է։ Դա կյանքն է, և այն հիասքանչ է իր

օրինաչափություններով, անգամ անօրինաչափություններով, եթե այդ պահին օրինաչափը դա է։

Բ. Հայոց լեզվի դասավանդումը գծապատկերների, սիմվոլների միջոցով

Աշակերտները սովորաբար դասերը ավելի լավ են պատկերացնում հատկապես գծապատկերների միջոցով։ Օրինակ՝ օժանդակ բայի գծապատկերը դեռ ցածր դասարաններից աշակերտների աչքի առաջ է (գծապատկեր 1)։

ԱՆՑՅԱԼ		ՆԵՐԿԱ	
Էի	Էինք	Եմ	Ենք
Էիր	Էիք	Ես	Եք
Էր	Էին	Է	Են

Գծապատկեր 1.

Աշակետները սա անգիր գիտեն, ուղղակի կարելի է հավելել, որ, ճիշտ է, բայն ունի երեք ժամանակ՝ներկա, անցյալ և ապառնի, բայց կան այսպես կոչված ***պակասավոր*** բայեր, որոնց քերականական այս կամ այն ձևը չկա, պակաս է։ Ահա, ***եմ*** օժանդակ բայը պակասավոր է,որովհետև չունի ապառնի ժամանակ։ Ավելին աշակերտները կսովորեն բարձր դասարաններում։

Կարելի է նաև ներկայացնել ոչ ստանդարտ գծապատկերներ և հանձնարարել, որ աշակերտները իրենք ինքնուրույն մեկնաբանեն։ Օրինակ՝ սահմանական եղանակի ժամանակաձևերը ավարտելուց հետո թեման կարելի է ամփոփել այսպիսի գծապատկերով։



Նախորդ դասերը յուրացրած աշակերտները հեշտությամբ, ինքնուրույն կկարողանան մեկնաբանել գծապատկերը։

Կարելի է հանձնարարել, որ աշակերտները գծապատկերների իրենց տարբերակները ստեղծեն և մեկնաբանեն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշակերտը ծրագրային թեմաները ավելի լավ է յուրացնում, եթե արժևորում է գիտելիքը, ունի սովորելու ցանկություն, պրպտող միտք և դասապրոցեսի ընթացքում ստեղծված անկաշկանդ մթնոլորտում ցուցաբերում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների շնորհիվ նյութը ընկալում և մեկնաբանում է ավելի պատկերավոր, տեսանելի, ինքնատիպ։ Ուսուցիչներն էլ (գրականության ուսուցիչը երևի մի քիչ ավելի, տես ՀԱՎԵԼՎԱԾը) ստեղծագործող են և կարող են մոտիվացնել և իրենց սաների մեջ

խթանել վերոնշյալ հատկությունները՝ այդպես նպաստելով կրթության որակի բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աֆորիզմներ

2. Վերապատրաստման դասընթացների ժամանակ կատարած գրառումներ

ՀԱՎԵԼՎԱԾ

Թռիչք

(նովել)

Տղամարդը ուժեղ շրխկոցով դուռը փակեց իր ետևից: Թվաց՝ տունը ցնցվեց: Բուխարու դիմաց կծկված կինը, որ պինդ փակել էր աչքերը և ձեռքերով ցավեցնելու չափ ուժեղ սեղմել էր ականջները, ջղաձգվեց, քարացավ: Սարսափեցնող լռություն իջավ ու կամաց-կամաց սկսեց գվվալ ականջների մեջ: Դժվարությամբ բացեց ծանրացած կոպերը, ձեռքերն անզոր ընկան ցած: Մեքենայաբար գրկեց ծնկները և ավելի կծկվեց: Փոքր - ինչ առաջ ձգված գլուխը նկատելի դողում էր սոսկալի լարումից: Մեծ, զարմացած աչքերը բևեռել էր սենյակի դռանը: Հիմա արդեն համակ լսողություն էր դարձել: Տենդագին սպասում էր: Շրթունքներն անձայն-անկենդան աղաղակում էին՝ ինչու՛, ինչու՛: Հանկարծ, իր համար էլ անսպասելի, հոգին պոռթկաց.

-Ինչու՛ …

Այդ մղկտացող ճիչից սթափվեց: Այո՛, այո՛: Կարծես թե սկսեց հասկանալ. սա իրականություն է, քիչ առաջ պայթած շրխկոցն էլ իրական էր … Նա էր…Նա: Գնա՞ց: Նա գնաց… Աչքերը կամաց-կամաց կենդանացան.

-Գնա՞ց … Ինչու՞…Ու՞ր …

Ուժերի գերլարումով պոկվեց տեղից, նետվեց դեպի դուռը, բացեց ու դուրս թռավ : Մուտքի սառը սալահատակը կանգնեցրեց նրան: Ետ եկավ, արագ-արագ հագավ կոշիկները, թեթև վերարկուն առավ ուսերին և կրկին վազեց դուրս:

Ահավոր մութ էր, և անհնար ու անիմաստ էր ինչ -որ բան տեսնել ,փնտրել՝ առավել ևս, բայց արագ քայլերով, համարյա վազելով հասավ վառ լույսերով ողողված մայրուղուն: Երիտասարդների մի ուրախ խումբ ծիծաղելով անցավ կողքով:Նրանց ծիծաղից ավելի զգաստացավ: Ուսերին գցած վերարկուն հագավ և սկսեց մարդկանց մեջ որոնել նրան: Բայց ու՞ր գնաց. որտե՞ղ փնտրել … Շարժվեց դեպի իրենց հարազատ մոտակա սրճարանը: Մտավ ներս: Տաք մթնոլորտը նրան լրիվ ուշքի բերեց: Մի թափառիկ հայացք նետեց նստածների վրա. նա չկար: Ծանոթ հայացքներից վախեցած՝ շտապ դուրս եկավ:

Զգաց օդի սառնությունը. վերարկուն կոճկեց, ձեռքերն ամուր սեղմեց գրպաններում:

Հիմա արդեն քայլում էր, ինքն էլ չգիտեր՝ ուր: Ուզում էր վերջապես հասկանալ պատահածը: Ախր ամեն ինչ այնքան անսպասելի, արագ կատարվեց,որ ինքն էլ չհասցավ, թե այդ ի՞նչ եղավ, ինչպե՞ս եղավ…

Այդպիսի բան երբեք չէր եղել:Այո՛, պատահել էր, որ թեթև վիճել էին և շուտ էլ հաշտվել էին: Իսկ այս անգամ…Այդքան ցավեցնող բառե՛ր, և այդքան կտրուկ,

երբեք չէր եղել: Նույնիսկ մի պահ թվաց, թե ուրիշ մարդ է իր դիմաց կանգնած. Փոխված էին դեմքը, շարժումները, անգամ ձայնը, ու ո՛նց էր գոռում, բայց ինչու՛:

Ի՞նչ էր պատահել , ինչու՞ էր այդքան զայրացած, ինքն ի՞նչ էր արել: Իսկ գուցե արե՞լ էր և մեղավո՞ր էր: Փորձեց ամեն ինչ վերհիշել: Սկզբից: Ճիգ գործադրեց, որ մտքերը հավաքի, պատկերները քայլ առ քայլ ետ տվեց…

Արմենը տուն եկավ բավականին ուշ: Նախորդ օրն էլ ուշ էր եկել: Ասաց, որ ընկերոջ՝ Հայկի հետ էր, և որ հեռախոսի ձայնն անջատվել էր: Այսօր ավելի ուշ եկավ: Զանգերին նորից չէր պատասխանել: Երբ ներս մտավ, դեմքը լարված էր: Առանց վերարկուն հանելու՝ արագ մտավ խոհանոց: Դանդաղ, ձգելով խմեց սառը ջուրը: Ասես չէր հագենում: Ինքն անհանգստացավ.

-Ինչպե՞ս ես, ի՞նչ է պատահել:

-Ոչինչ,- կտրուկ, առանց իրեն նայելու՝ մտավ սենյակ, ասես ընկավ բուխարու մոտ դրված ճոճաթոռին ու սկսեց մեքենայաբար ճոճվել: Ինքն ավելի անհանգստացավ: Մոտեցավ, ծնկեց ոտքերի առաջ, բռնեց աթոռը: Քննախույզ նայեց դեմքին: Փորձում էր հասկանալ (միշտ էլ իրենք միմյանց հասկացել էին՝ անգամ առանց խոսքերի): Բայց նա խուսափուկ փախցրեց աչքերը:

- Ասա՛, ի՛նչ է պատահել,- համարյա խնդրելով փորձում էր խոսեցնել,- ես ախր տեսնում եմ, որ մի բան կա, ասա՛, գուցե օգնեմ քեզ: Ասա՛:
Ձեռքերը բարձրացրեց, ուզեց դեմքն առնել ափերի մեջ ու վերջապես նայել աչքերի մեջ: Եվ այդ պահին, այո՛, այո՛, հենց այդ պահին նա իրեն հետ հրեց: Ինքը այդպիսի արձագանքի չէր սպասում և մեկեն փռվեց հատակին:

Արմենը կտրուկ վեր կացավ, թվաց՝ պետք է գրկի, բարձրացնի, ներում խնդրի , բայց հեռացավ՝ իրեն թողնելով շշմած, փռված՝արագ-արագ ետուառաջ անող ճոճաթոռի դիմաց… Ի՞նչն էր ավելի ուժեղ՝ զարմա՞նքը, թե՞ վիրավորանքը: Դեռ երբեք նրան այդպիսին չէր տեսել: Անզորությունից ու ցավից ձայնը ակամա բարձրացրեց: Իր ձայնն իր համար օտարոտի էր.

-Ի՞նչ ես անում, դու հասկանու՞մ ես՝ ի՛նչ ես անում … Ի՞նչ է եղել: Ես տեսնում եմ՝ մի լուրջ բան է պատահել: Ասա՛, ես քո կինն եմ, ասա՛, գուցե օգնեմ քեզ,- ու փորձեց բարձրանալ:

-Դու՛, դու՛… դու ինձ ինչո՞վ կարող ես օգնել: Դու չես կարող օգնել, ոչնչով չես կարող օգնել, ոչնչով,- ու ամեն խոսքի հետ այնպես էր ձգվում առաջ, թվում էր՝ բառերը նետում էր իր վրա: Այդ անսպասելի տարափից ինքն ավելի թուլացավ, ընկրկեց ու նորից հետ ընկավ … Հետո՞, հետո՞ ինչ եղավ … Հետոն արդեն աղոտ է պատկերվում: Հիշում է միայն, որ նա շարունակ ինչ-որ անհասկանալի բաներ էր ասում, ասու՛մ, ինչ–որ մեղադրանքներ, իսկ ինքը, այդ ցնցող անսպասելի հարվածներից արդեն անզգայացած, միայն ավելի ու ավելի էր կծկվում, մինչդեռ նրա ձայնն ավելի էր բարձրանում, այնպես, որ թվաց՝ ականջներն այլևս չեն դիմանում, և ամուր-ամուր սեղմեց ականջները, որ չլսի, միևնույնն է, ասածներից ոչինչ չէր հասկանում …

ՈՒ հիշում է մեկ էլ դռան ուժեղ շրխկոցը՝ ահավոր, զարհուրելի: Բայց ինչու՞ : Դեռ երբեք, այս հինգ տարիների ընթացքում նա երբեք ձայնը չէր բարձրացրել: Միշտ

այնքան հոգատար, նրբանկատ: Գիտեր՝ ինքն ինչ է ուզում, իրենից լավ գիտեր, թե ինչն է իր համար լավ , ինչը՝ վատ: Ի՞նչ պատահեց այսօր հանկարծ:

-Աստվա՛ծ իմ, հիմա երևի հասկացել է, թե ինչ վիճակում եմ ես, և տուն է եկել, իսկ ես տանը չեմ: Այո՛, այո՛, հիմա նա տանն է:

Կտրուկ շրջվեց և արագ-արագ, գրեթե վազելով հասավ տուն:

Դուռը բաց էր: Այո՛, եկել էր: Նետվեց առաջ, ճաշասենյակ, խոհանոց, ննջարան, լոգարան … նորից, խոհանոց, ննջարան, ճաշասենյակ: Կանգնեց, լարեց լսողությունը. ոչ մի ձայն: Նայեց՝ ոչ վերարկուն էր կախված, ոչ էլ կոշիկներն էին իրենց տեղում:

-Չի՛ եկել: Բայց դուռը… ա՛, դուռը ես բաց եմ թողել:

Հուսահատ, թուլացած մոտեցավ դռանը, դանդաղ փակեց: Կոշիկներն ու վերարկուն մի կերպ հանեց, կոտրված հասավ բուխարուն, ընկավ փոքրիկ գորգին: Նայեց անտարբեր: Իսկ բուխարու կրակը վաղուց մարել էր, միայն փոքրիկ կարմիր կետիկներ էին կայծկլտում, ասես հուշում էին, որ դեռ կարելի է կրակին շունչ տալ:

Անիրական էր, այս օրը ուղղակի անիրական էր, վատ երազ:

-Բայց ու՞ր կլինի ախր: Տեսնես՝ ի՛նչ էր պատահել, -բայց , տե՛ր Ա,ստված , ինչպես է իրեն կորցրել, ինչպես մինչև հիմա մտքով չի անցել. ախր կարելի էր ուղղակի զանգել: Մի կերպ վեր կացավ, փնտրեց գտավ հեռախոսը: Սիրտը նորից սկսեց անհանգիստ բաբախել: Ստուգեց, մի թույլ հույս ուներ, որ զանգած կլինի: Ախր տեսավ չէ՞, որ ինքը վատ է, շատ վատ. Ինչպե՞ս իրեն այդ վիճակում թողեց…Չէ՛,

չէր զանգել: Համարյա դողացող ձեռքերով ինքը զանգեց: Զանգերը գնում են, բայց պատասխանող չկա: Նորից նայեց հեռախոսին. ճիշտ է զանգել :Փորձեց նորից: Զանգերը գնում էին այս անգամ արդեն ձգվելով, լալագին և ավելի մեծ դադարներով, իսկ սիրտը զարկում է ավելի անհանգիստ, ավելի ուժգին…

Անհասկանալի վիճակը այլևս անկառավարելի է դառնում:Ասես ներսում հրդեհ է բռնկվել: Անզորությունի՞ց, գուցե վախի՞ց (արդեն ինքն էլ չի հասկանում) այրվում է միտքը: Դատել այլևս անկարող է: Միայն զանգում է, զանգում, ու…անպատասխան:

Իսկ գուցե ընկերո՞ջը զանգի. նախորդ օրը նրա հետ էր եղել:Գուցե հենց Հա՞յկը գիտե ամեն ինչ, գուցե նրա՞ն է պատմել:

-Աստվա՜ծ իմ , կարո՞ղ է ինչ-որ հիվանդություն կա,- քրքրեց մտքերը. ախր վերջերս ամեն ինչի հանդեպ մի տեսակ անտարբեր էր դարձել, ցրված էր, հոգնած: Ինչպե՞ս ինքը դրան ուշադրություն չէր դարձրել:Այո, ճիշտ է,վերջերս փոխվել էր մի տեսակ: Մի՞թե իրոք…

Այդ մտքից մարմնով մի ցավեցնող դող անցավ: Անկառավարելի հրդեհը սառեց:

-Ո՛չ, ո՛չ, միայն թե ո՛չ դա: Ինչեր ասես,որ չեմ մտածում,-ասես մտքերը ցրելու համար սկսեց արագ-արագ քայլել սենյակում,- ախր ի՞նչ անեմ, ի՞նչ մտածեմ. տարօրինակ ձևով , առանց որևէ բան բացատրելու՝ թողեց ինձ անորոշության մեջ ու գնաց: Ինչու՞… Բայց , չէ՛, հավաքվել է պետք, սթափվել: Ի՞նչ է պատահել

որ: Հիմա կգա, կխոսենք , հաստատ մի ուրիշ պատճառ կա, կբացատրի,կհասկանամ վերջապես, ու ամեն ինչ լավ կլինի: Բայց այս գիշերով ու՞ր գնաց ախր… Չէ, չէ, կգա հիմա, մի քիչ սպասել է պետք ուղղակի: Նա ինձ այսպես երկար չի թողնի: Եվ զանգել էլ այլևս պետք չէ: Վերջ, էլ չեմ զանգի:

Հեռախոսը նետեց մի կողմ: Բայց այս ինչքա՜ն ցուրտ է, թե՞ ինքն է մրսում: Նորից մոտեցավ բուխարուն: Մեքենայաբար մի քանի փոքրիկ փայտիկներ դրեց անկենդան մոխրի վրա: Այս բուխարին էլ նա է սարքել,իր ձեռքերով, հարմարեցրել է իրենց փոքրիկ բնակարանին, և տան՝ իրենց ամենասիրելի անկյունն է:Հաճախ են երկուսով կրակի ջերմության և վառվող փայտերի ճարճատյունի տակ վայելել երեկոները՝ այդ կրակի վրա եփած սուրճ կամ մի-մի գավաթ գինի ըմբոշխնելով: Գինի՜…Անսպասելի մտքից ասես ոգևորվեց, վեր կացավ տեղից, շտապով մոտեցավ խմիչքների դարակին, մեկնեց ձեռքը և պատահած առաջին խմիչքը վերցրեց, լցրեց կողքին դրված բաժակը և միանգամից խմեց: Գուցե օգնի՞ : Ապա լցրեց երկրորդը և վերադարձավ իր տեղը՝ շիշն ու բաժակը ձեռքին: Նորից կծկվեց սառչող բուխարու դիմաց:

-Այսօր ես մենա՛կ կխմեմ: Ոչինչ, ոչինչ, մինչև կգաս,- ու խմեց այս անգամ մի քիչ դժվարությամբ, կում-կում, բայց մեկ շնչով: - Կգա՜ս…Կգաս ու ինձ պատասխան կտաս՝ ինչու՛ ինձ հետ այսպես վարվեցիր: Այսքան անխիղճ: Ինչ էլ պատահած լիներ, դու արդարացում չունես: Բայց ոչինչ, դու արի ,արի…

Ու, անկախ իրենից, խոսում էր բարձրաձայն, հարցնում էր՝ ձեռքերն առաջ ձգելով, թափահարելով, ասես դիմացը ինչ- որ մեկը կար: Իր ձայնն էլ մի տեսակ զնգալով էր հասնում իր ականջներին, ապա կամաց-կամաց ցածրացավ, նվաղեց, աչքերը պղտորվեցին, պատկերները աղոտացան: Ճոճաթոռի ծածկոցը մի կերպ ձգեց, , քաշեց վրան, իսկ շրթունքները մեքենայաբար, գրեթե մարած ձայնով կրկնում էին՝ ինչու՛, ախր ինչու, ես ի՞նչ էի արել…

…Արթնացավ՝ մարմնում ինչ- որ սառը դող : Դրսում խոր գիշեր էր, մութ: Ծեծվածի նման մի կերպ հասավ մահճակալին, մեկնվեց : Ապա դժվարությամբ, առանց հանվելու մտավ վերմակի տակ: Սաստիկ մրսում էր, սրթսրթում:Առաջին անգամ, այս հինգ տարիների ընթացքում առաջին անգամ ինքը մենակ է իրենց անկողնում: Ձեռքը մեկնեց ամուսնու՝ դատարկ կողմը:ԻՆչ-որ բան սեղմում էր կոկորդը, խեղդում: Զգաց, որ այտերը տաքանում են …արցունքներից:. Աչքերն ազատվում էին կուտակված հույզերից: Անձայն, անաղմուկ…

Կեսքուն-կիսարթուն ինչ-որ մղձավանջներ էր տեսնում:Պատկերներները լողում էին աչքերի առաջ: Մեկ տեղից վեր էր թռչում, մեկ տնքում էր՝ խուլ ու հուսահատ: Զգում էր , որ այրվում է, շնչահեղձ է լինում: Վերմակը դեն էր նետում , մի պահ թեթևանում, ապա , սաստիկ դողալով, նորից կծկվում էր վերմակի տակ: Ընդամենը մի քանի րոպե, և նորից այրվում էր , ասես հնոցում:

- Ջո՛ւր,-թվաց՝ ուրիշի ձայնն ընկավ իր ականջը: Այրվող կոպերը կկոցեց և հասկացավ, զարմանալիորեն հստակ հասկացավ, որ ոչ ոք, ոչ ոք չկա , որ իրեն

ջուր տա: Իսկ բերանը չորացել էր: Հազիվ հավաքեց ուժերը , վերմակով փաթաթվեց և հասավ խոհանոց: Անհագ խմեց մի բաժակ ջուրը: Ասես շունչը տեղն ընկավ: Միտքն ավելի պայծառացավ: Նկատեց, որ լուսադեմ է արդեն: Թեթև դող կար ոտքերում, բայց չուզեց պառկել(գուցե վախեցա՞վ): Դանդաղ մոտեցավ պատուհանին. քաղաքն արթնանում էր: Կենդանության թեթև ալիք խլրտաց նաև իր ներսում , թեև գլուխը դեռ բութ ցավում էր: Վերցրեց դեղերի տուփը, գտավ անհրաժեշտ դեղը ,խմեց: Նորից մոտեցավ արդեն արևահար պատուհանին: Արևի նվաղ ճառագայթները հպվեցին դեմքին: Լուսավոր ջերմությունից աչքերը փակվեցին:Երեկվա պատկերները կրկին շունչ առան, բայց հիմա ինքը ավելի հանգիստ է,ավելի սթափ:Այո, չէ՞ որ ամեն ինչ այնքան էլ սարսափելի չէ: Միայն թե պետք է գտնել հեռախոսը(ախ, այդ հեռախոսը): Այս անգամ շատ արագ գտավ. ճոճաթոռի մոտ էր: Կռացավ, որ վերցնի, մի ծանոթ տագնապ նորից ներխուժեց սիրտը. գուցե զանգել է: Դեռ երբեք սրտի տեղն այսքան հստակ չէր զգացել:Ստուգեց. ոչ, զանգ չէր եղել:Նորից սկսեց մրսել: Փաթաթվեց վերմակով և մի կերպ տեղավորվեց ճոճաթոռի մեջ: Հեռախոսը ձեռքում ամուր սեղմած՝ դեռ երկար մտածում էր՝ զանգե՞լ, թե՞ ոչ:Վերջապես համարձակվեց. դե իհարկե,զանգել: Պետք է, պետք է որքան հնարավոր է շուտ վերջ դնել այս անորոշությանը: Պետք է իմանալ, թե որտեղ է հիմա: Երբեք չէր պատկերացնի, որ ամուսնուն զանգելը այսքան դժվար կլինի: Զանգերը գնում էին , ու էլի անպատասխան: Զգում էր, թե ինչպես է նորից տաքանում: Զայրացավ. Դեղը չի օգնել…Զանգեց նորից:Հանկարծ զանգերը ընդհատվեցին: Վերցրե՞ց : Հեռախոսը

սեղմեց ականջին… Այո՛, վերցրել է։ Հանկարծակիի եկած՝ շփոթվեց, իրեն կորցրեց։ Զգվեց, փորձեց շտկվել տեղում՝ ալո՛ն… Հեռախոսն անջատվեց, թե՞ անջատեցին։Ականջներին չէր հավատում։ Հուզմունքը, վախը, զայրույթը խառնվեցին իրար.արդեն չէր էլ հասկանում՝ ինչ է զգում։ Մի կողմ գցեց վերմակը։ Դողացող մատներով նորից զանգեց ։ Պատասխանեց մի անտարբեր ձայն.<<Ձեր հավաքած համարը այս պահին անհասանելի է(մի՞թե սխալ է զանգել,ստուգեց.ո՛չ, ճիշտ էր),զանգեք մի փոքր ուշ>>։ Լսեց մինչև վերջ՝ հեռախոսը ականջին ամուր սեղմած, թեպետ այդ բառերը լսել էր հազար անգամ ։ Անջատվեց։ Զանգեց նորից։Նույն աղջիկն էր։ Էլի, էլի փորձեց…Նույնը։Երեկվա ողջ մղձավանջը նորից փոթորկվեց։ Բայց այսօր ինքն ավելի թույլ է, անուժ,էլ չի կարող դիմանալ, այսպես կխելագարվի…Վերջապես,անճարակությունից , որոշեց զանգել Հայկին։

Հանկարծ հասկացավ, որ վաղ առավոտ է, և անհարմար է այդ ժամին զանգելը ,խառնվեց իրար, ուզեց շուտ անջատել, բայց … արդեն ուշ էր։ Լսվեց Հայկի պայծառ ձայնը.

- Ալո՞, Արևիկ, դու՞ ես։

- Հա՛,-մի կերպ , շփոթված արտաբերեց։ Ի՞նչ է ասելու, ինչպե՞ս է հարցնելու…

-Էս առավոտ ծեգին ի՞նչ է պատահել, որ զանգել ես,-անհանգստություն զգաց Հայկի ձայնում։-Ախպերս ո՞նց է, որտե՞ղ է , ինչու՞ ես դու զանգել..Արևի՞կ…

Իսկ Արևիկի շունչը կտրվում էր, խոսել չէր կարողանում։

- Արևի՞կ: Բա՞ն է պատահել:

-Չէ, չէ՛…

-Հեռախոսը կփոխանցե՞ս Արմենին, թե՞ նեղացել է ինձնից: Գիտեմ՝ նեղացած կլինի. ախր ուզում էր հետս գալ Ղարաբաղ: Բայց անսպասելի այնպես ստացվեց, որ շտապ,առանց իրեն ասելու գնացի: Կգամ, կպատմեմ: Ոչինչ, մյուս անգամ միասին կգնանք,-հետո ոգևորված ավելացրեց,- երեք օր տղայիս հետ էի: Կարևորը՝ տղես լավ է. հա, տղամարդ է դարձել զինվորս:

Արևիկը մի պահ թեթևացավ, երբ թեման փոխվեց:

-Հա՞, լա՞վ է:

-Հա: Արդեն Երևան ենք գալիս: Հենց տուն հասնենք, կզանգեմ:Բայց չասացիր, Արևիկ ջան, ի՞նչ էր պատահել, ինչու՞ էիր զանգել էս առավոտ ծեգին :Արմենը ո՞նց, հո բան չի՞ պատահել,-նորից անհանգստություն զգացվեց Հայկի ձայնում:

-Չէ, Հայկ ջան, - հազիվ կարողացավ իրեն հավաքել,-կներես, ձեռքս էր կպել պատահմամբ:

-Ա՛, ես էլ ասացի՝ բան է պատահել, ախր էս քանի օր չեմ խոսել հետը:Դու իրեն բարևի: Ասա՛,հենց հասա, առաջինը ձեր տուն կգամ. էնքան բան կա պատմելու:

-Հաա,-ձայնը սկսեց դողալ:

-Արևի՞կ,Արևի՞կ,ինչ եղավ…

Տե՛ր Աստված …ի՞նչ էր սա: Ինքը քնա՞ծ է, թե՞ արթուն…Իրո՞ք իր հետ է կատարվում այս ամենը:Շունչը կտրվում է, թվում է՝ հիմա կխեղդվի :

-Արևի՛կ,-Հայկի ձայնը սթափեցրեց նրան:Վախեցած անջատեց հեռախոսը: :Տե՛ր Աստված, ի՞նչ էր սա…Բայց ինքը ճի՞շտ լսեց: Փորձում էր հիշել Հայկի ասածները, հիշում էր Արմենի խոսքերը, թե նախորդ օրը Հայկի հետ է եղել… Մի՞թե խաբել է…Բայց Արմենը երբեք իրեն չի խաբել: Նրան ինքը լավ է ճանաչում….Բայց ուրիշ Հայկ չկա: Խաբե՞լ է…

Նորից տենդագին քրքրեց հիշողությունը: Նորից, նորից: Ու մտքերը քիչ-քիչ ավելի պարզվեցին: Բայց մի՞թե դա հնարավոր է: Մի՞թե խաբել է իրեն…Բայց ինչու՞…Հիմա արդեն անորոշությունն ու զայրույթը խառնվել էին իրար: Տեղը չէր գտնում: Վերմակը հազիվ քարշ տալով՝ մի կերպ շարժվեց… Գուցե շատ լուրջ պատճա՞ռ կա:Բայց ի՞նչ…

Հանկարծ հեռախոսը ձեռքում զնգաց: Հանկարծակիի եկած՝ վախեցավ :Հայկն էր:

Անջատեց: Վերմակով փաթաթվեց և սկսեց սենյակում հետուառաջ անել: Հեռախոսը կրկին խուլ աղմկեց ու վերջապես լռեց: Բայց Արևիկը ասես չէր էլ լսում… Խաբե՛լ է, կեղծե՛լ է: Մի՛թե դա հնարավոր է: Ինչ պատճառ էլ լինի,արդարացում չունի:Ու նորից սկսեց հեռախոսը փնտրել՝անզոր կատաղությամբ ինքն իր հետ բարձրաձայն խոսելով.

- Գտնեմ՝ ջարդելու եմ, փշուր-փշուր եմ անելու այդ չարաբաստիկ հեռախոսը: Չկա, չկա, միշտ կորչում է:

Վերմակը ծանրացել, կախվել էր ուսերից: Դեն նետեց…Օ՜, ոչ. հեռախոսը ձեռքում էր: Միանգամից թուլացավ, հենվեց պատին, զանգեց ու հեռախոսը պինդ սեղմեց ականջին: Նույն աղջիկն էր՝ „Փորձեք մի փոքր ուշ…„:

-Ո՛չ, հիմա՛, հիմա՛, հենց հիմա՜ պատասխանիր, -անճարակությունից, զայրույթից, անորոշությունից ինքն էր հիմա գոռում, - վերցրու՛, վախկո՛տ, պատասխանի՛ր, որտե՞ղ ես, ինչու՞ ես խաբել , ինչու՞ ես փախչում …

Ոտքերը հազիվ քարշ տալով, պատերին հենվելով, մի կերպ հասավ ննջարան:

-Ստախոոոս, կեղծ, ինչպե՞ս ես կարողացել …,-ձայնը գնալով նվաղում էր, գլուխը՝ մաղում: Աչքերի առջև պատկերները պղտորվեցին, սիրտը թալկացավ: Ընկավ մահճակալին: Մի պահ անշարժացավ, ապա հազիվ, ծանր ձգվեց դեպի վերմակը: Սաստիկ դողում էր, մրսում: Թուլացած ձեռքը հազիվ մեկնեց , դարակից դեղը վերցրեց ՝ վերջինը, խմեց: Վերմակը դանդաղ քաշեց գլխին, կծկվեց: Ծանր,աղմուկով շնչում էր: Թվաց՝ շնչահեղձ է լինում:Վերմակը դեն գցեց… Նորից սկսեց դողացնել: Ու նորից կծկվեց վերմակի տակ: Կամաց-կամաց տաքացավ, մարմինը թմրեց, միտքն աղոտացավ , բայց հիմա էլ ասես հրդեհվում էր: Վերմակը նորից դեն նետեց…

…Արևի ճառագայթների մի ձյունաճերմակ փունջ ընկել էր ուղիղ աչքերին: Գլուխը դանդաղ ետ տարավ: Կկոցած աչքերը ջերմություն զգզացին: Այս ե՞րբ հայտնվեց ձյունաճերմակ արևը: Մտել է իր սենյակ և թելադրում է՝վե՛ր կաց: Ակամա ենթարկվեց: Թույլ էր, շատ թույլ :Կրկին ստուգեց ու համոզվեց, որ դեղ

չկար: Ի՞նչ անել:Բայց ինքը կարո՞ղ է գնալ դեղի: Նորից սկսեց փնտրել հեռախոսը (ա'խ, այդ հեռախոսը), գտավ, անհույս ստուգեց. չէ՜, զանգ չի եղել:Առանց արդեն որևէ սպասելիքի, աղղակի ինքը զանգեց: Եվ, օ՜…տե՛ր Աստված, զանգերը գնում են: Հեռախոսը ամուր սեղմեց ականջին:Սրտի թփթփոցն ավելի ուժեղ էր լսում, քան զանգերի ձայնը:Բայց ինչու՞ նորից չի պատասխանում: Գուցե սխա՞լ է զանգել:Նայեց. չէ, ճիշտ է: Ու հենց այդ պահին հեռվից մի զրնգուն, երգեցիկ ձայն՝ այո՜…

Ի՞նչ, ո՞վ է սա:Նորից ստուգեց. Աչքերի առաջ շաղվել էր. լավ չէր տեսնում , բայց ,այո՛, ամուսնու համարն է: Հեռախոսը կրկին սեղմեց ականջին, ու նորից.

- Այո՜:

Ո՛չ , չի սխալվում. կնոջ ձայն է:Անծանոթ ձայն:Սառել-քարացել էր: Ուզում էր խոսել, բայց լեզուն պապանձվել էր: Հանկարծ հեռվից լսեց մի անծանոթ, թե՞ ծանոթ ձայն.

-Եկա՜, սիրելի՜ս, ինչ ուզել էիր, գնել եմ:

-Ալո՜,-դեռ համառում է արդեն քիչ զայրացած կինը, ապա ավելի հեռվից է խոսում,- գիտե՞ս, սիրելիս, ինչ- որ անծանոթ համարից են զանգել քեզ, բայց չեն խոսում: Ախր ես շնչառությունը պարզ լսում եմ:Խոսե՛ք:

Արևիկին թվաց, թե հենց իր ականջի մեջ ճայթեց կնոջ ձայնը : Հեռախոսը վախեցած հետ տարավ ու այդ պահին .

_Ի՞նչ,-խուլ, հեռվից լսվեց… ամուսնու,այո՛, ի՛ր ամուսնու ձայնը: Հեռախոսը նորից սեղմեց ականջին, ու արդեն ավելի մոտիկից լսեց, -իմ հեռախոսը ինչու՞ ես վերցրել…

Այլևս կասկած չկար. ամուսինն էր: Դողացող ձեռքերից հեռախոսն ընկավ ցած՝ իր հետ տանելով մարող ձայներ՝ կնո՞ջ, թե՞ տղամարդու, հետո ամեն ինչ լռեց :

Արևիկը դանդաղ ծալվեց հատակի:

Հանկարծ սարսափելի այդ լռության մեջ մի հեծեծանք պոռթաց:Այս մի քանի ժամերի, ո՛չ , օրերի , ախ ոչ , հավերժությա՛ն ողջ հույզերը, որ կուտակվել-քարացել էին հոգում,սրտում, ուղեղում, դուրս ժայթքեցին: Չէր գոռում. ոռնում էր վիրավոր գազանի նման: Սկսեց հազալ, խեղդվել :Ձեռքերով ամուր օղակել էր կոկորդը. ասես այնտեղ ինչ-որ բան էր խցանվել, և շնչահեղձ էր անում:Մթնող աչքերը աջ ու ձախ էին բախվում :Հանկարծ հայացքն ընկավ պահարանին դրված նկարին: Թափով պոկվեց տեղից, հասավ , շրջանակից հանեց նկարը ու մի պահ անշարժացավ.նկարի միջից իրեն էին ժպտում երկու գեղեցիկ դեմքեր՝այնքան ծանոթ ու այնքան օտար: Ծամածռված, ցավոտ մի ժպիտ խոցեց հոգին, ու անասելի արագությամբ նկարը պատառ-պատառ արեց: Ցաք ու ցրիվ արեց գրքերը, ամսագրերը, թերթերը…Արդեն ավելի լուռ մոկտալով ՝ հենվեց պահարանին: Ուժերը սպառվել էին: Այլևս ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում: : Ոչինչ չէր զգում:

Խոնավ ձեռքերով սեղմել էր թպրտացող սիրտը . կարծես պահում էր, որ դուրս չթռչի, ու թույլ հևում էր: Անկենդան, սառած հայացքը հառած մի կետի՝ անէացել էր: Ռոպենե՞ր անցան, թե՞ ժամեր…

Անսպասելի դուռը թակեցին: Շանթահարվեց:Աչքերը լայնացան:Սիրտը մի պահ կանգ առավ, ապա սկսեց ավելի ուժգին բաբախել: Թակոցը կրկնվեց, ապա՝դռան զանգը՝ երկար, թվաց՝ աղետաբեր: Սարսափեց: Ձեռքերով փակեց ականջները:Որքան ուժեղ էին ծեծում դուռը, այնքան ամուր էր սեղմում ականջները: Ոռո՛չ, ո՛չ, ոչ մեկին տեսնել չի ուզում:Ոչինչ լսել չի ուզում:Անկախ իրենից՝ սկսեց բարձր հեկեկալ. զանգի ձա՞յնն էր ուզում խլացնել, թե՞ թմբիրից էր ուզում ինքն իրեն հանել: Բայց արցունքներն աչքերում քարացել էին :

Ձայները վերջապես լռեցին: Ձեռքերը դանդաղ սահեցին ցած. այո՛, վերջ: Էլ չեն զանգում, չեն թակում: Ամեն ինչ լռեց:Մի պահ կարծես ինքն էլ հանգստացավ: Բայց … բայց գուցե նա՞ էր: Աչքերը անբնական փայլ առան:

-Նա՛ էր, նա՛ էր, եկե՛լ էր: -Չգիտես որտեղից հայտնված առույգությամբ նետվեց դեպի դուռը , շտապով բացեց …Ոչ ոք չկար: Ձգվեց առաջ, լարեց լսողությունը. կանացի կոշիկների ինչ-որ կտկտոց վերևի հարկից էր գալիս:Հարևանուհի՞ն էր: Մի՞թե իր ձայնն էր լսել ու եկել:Անաղմուկ զգուշությամբ դուռը վրա բերեց , ձեռքերը դանդաղ ձգեց ու երկայնքով

կպավ- մնաց երկաթե սառը դռանը: Անկախ իրենից՝ նորից սկսեց բարբառել՝ ցածրաձայն ու մեքենայաբար.

-Ո՛չ, ո՛չ, հարևանուհին չէր, նա էր, նա՛ էր:Հաստատ ինչ-որ բան ես սխալ եմ հասկացել: Նա եկել էր ու համառորեն թակում էր դուռը, իսկ ես չբացեցի: Արմե՛նն էր…

Անսպասելի ու անբացատրելի մի ոգևորությամբ թափով պոկվեց դռնից, կոշիկները փութկոտ ոտքերը քաշեց ու դուրս նետվեց: Սառը օդը միանգամից սթափեցրեց Արևիկին: Աչքերը ափերով փակեց.թվա՞ց, թե՞ իրոք դրսում ահավոր լուսավոր էր: Անսովոր ինչ-որ վիճակից երերաց ու մի պահ կանգնեց տեղում: Մարմնով մի ցուրտ անցավ: Զգաց, որ վերարկուն չի հագել, բայց ետ չդարձավ. ժամանակ չկար,պետք էր նրա ետևից հասնել: Աչքերը կկոցած՝ մի նյարդային ու ոչինչ չտեսնող հայացք սահեցրեց շուրջբոլորը, ապա սկսեց անորոշ քայլել, քայլերը կամաց-կամաց արագացրեց, քայլեց արագ-արագ, ավելի արագ: Հիմա արդեն վազում էր՝ ու՞ր. ինքն էլ չգիտեր: Մարդիկ նայում են նրան, ոմանք՝ անտարբեր, ոմանք՝ հետաքրքրված: Իսկ նա ոչ մեկին չէր տեսնում: Օդում պարող սառը բյուրեղիները խփում էին դեմքին և ասես շունչ տալիս:

- Տիկի՛ն, տիկի՛ն,- հետևից մի ձայն լսեց. իրե՞ն էին կանչում,- տիկի՛ն:

Չգիտես ինչից վախեցած՝ սկսեց ավելի արագ վազել: Հետևից զգաց ինչ-որ մեկի թեթև հևոցը: Իր հետևի՞ց են վազում: Զայրացած կանգ առավ:Ետ նայեց:

Ոչ մեկի չտեսավ: Նայեց կողքերը. մարդիկ կային ու իրեն էին նայում :

Կատաղեց,բայց ձայն չհանեց, շրջվեց ու աչքերը գետնին գցած՝ սկսեց արագ քայլել: Լարեց լսողությունը. հետապնդող հնոցը կարծես էլ չկար:Մի քիչ հանդարտվեց ու աչքերը վեր բարձրացրեց: Ապշեց. կամրջի վրա էր: Այս ինչպե՞ս, ե՞րբ հասավ այստեղ: Դանդաղ մոտեցավ եզրաճաղերին: Նայեց ցած, սարսռաց : Ակամա ետ ձգվեց: Բայց ինչ-որ տարօրինակ ազատության զգացում նրան կրկին մղեց դեպի եզրը : Հենվեց քարե բազրիքին ու նայեց ցած : Անհատակ անդունդը նրան թևեր էր տալիս: Բերանն ու աչքերը լայն բացած՝ անհագուրդ շնչում էր սառը օդը: Շուրթերին թեթև ու զարմանալիորեն տաք ժպիտ հայտնվեց.<<Ա՛՛՛, ուրեմն այսպես է լինում, այսպե՛ս է լինում, որ մարդիկ կամրջից ցած են նետվում>>: Հայացքը ձուլվել-կորել էր անդունդի խորքերում…

Կամուրջն իրենց տան մոտ էր, և հաճախ էր անցել վրայով, բայց երբե՛ք, երբե՛ք չէր զգացել բարձրության դիվային հմայքը:

-Տիկի՛ն,- նույն ձայնն էր,- տիկի՛ն, կմրսեք:

Ասես թմբիրից արթնացավ, դժվարությամբ պոկեց մեխված հայացքը ու ետ նայեց:

-Կմրսեք, ,- մի գեղեցիկ երիտասարդ կանգնել էր կողքին և վերարկուն էր հանում :

-Վերարկու չեք հագել,-ու ժպտալով մեկնեց իրենը:

- Ո՛չ, ո՛չ, պետք չէ,-շփոթված,գլուխը ցած կախած՝ շտապով անցավ տղայի կողքով ու արագ քայլեց :Կարծես երիտասարդը էլի գալիս էր իր ետևից:Կանգնեց, շրջվեց:Ո՛չ, տղան կանգնած էր նույն տեղում ու էլի իրեն հեռվից ժպտում էր (թե՞ իրեն այդպես թվաց):Ակամա դեմքը ծռմռվեց: Ամաչեց իրենից, իր վիճակից: Ժակետի թևքերը իրար վրա քաշեց ու փոքր-ինչ կծկված,բայց արդեն ավելի սթափ՝ արագ քայլերով ,համարյա վազելով շտապեց տուն:

Դուռը էլի բաց էր: Ներս մտավ ու անուժ ընկավ միջանցքի հատակին: Ոչինչ, ոչինչ չէր զգում: Կծկվեց : Կամաց-կամաց սառած մարմինը սկսեց հալվել: Թույլ մի դող մտավ մեջը. այրվո՞ւմ էր, թե՞ մրսում: Դժվարությամբ հանեց կոշիկները :Ոտքերը չէր զգում: Կապտած մատներով սկսեց դանդաղ տրորել քարացած ոտնաթաթերը :Ապա սրթսրթալով գրկեց ծնկները և սկսեց միալար ,անզգա տարուբերվել: Դեմքին թափված գանգուրներից կախված սառցե բյուրեղիկները զարկվում էին դեմքին, ասես ուզում էին արթնացնել խորը թմբիրից: Դրանց համառությունը նյարդայնացրեց Արևիկին: Դողացող ձեռքերը ձգեց վեր . ուզում էր ետ տանել, վերացնել այդ համառ սառցեփունջը : Զգաց, որ շորերն էլ էին սառած-քարացած: Ու առաջին անգամ նկատեց, որ ինչքան ժամանակ է՝ նույն շորերով է՝ գիշեր, թե ցերեկ.թեպետ արդեն իր համար օրերը, գիշերն ու ցերեկը խառնվել էին իրար: Մի կերպ վեր կացավ, հազիվ վրայից պոկեց սառած շորերը ու դանդաղ շարժվեց դեպի լոգարան: Կանգնեց ցնցուղի տակ, բացեց ջուրը: Սառը շիթը սրթսրթացրեց

մարմինը, բայց հետ քաշվել չկարողացավ. ուժ չուներ: Իսկ ջուրը կամաց-կամաց սկսեց տաքանալ: Քարացած մարմինն էլ քիչ-քիչ ջերմացավ : Աչքերը կենդանացան, սկսեցին այրվել: ՈՒ այս մղձավանջային օրերի ընթացքում առաջին անգամ զգաց, որ աչքերից արցունքներ են գալիս: Այո՛, լալիս էր: Ամբողջ հոգով,մարմնով,աչքերով լալիս էր : Ուժեղացրեց ջրի շիթը: Հիմա լալիս էր նաև ձայնով, բարձր, բարձր, ասես ջրի խշշոցին ձայնակցելով: Ձեռքերը բարձրացրեց դեպի ցնցուղը: Ջուրը անխնա, ուժեղ հարվածելով , հեղեղի նման թափվում էր ցած: Այդ հարվածների՞ց , թե՞ ջրի տաքությունից էր ցավում թալկացած մարմինը, բայց նա արձանացած կանգնել էր: Ասես ուզում էր ,որ ուժեղ շիթը սրբի-տանի ցավը,այդ տարօրինակ հիվանդ ցավը…

Թե ինչքան մնաց ցնցուղի տակ, ինքն էլ չզգաց, միայն թե հիմա ավելի թեթևացած է մարմինը, խաղաղ է հոգին (գուցե խաբուսի՞կ է, բայց դրա մասին հիմա մտածել պետք էլ չէ) : Փաթաթվեց տա՛ք, փափուկ խալաթի մեջ և մոտեցավ բուխարուն: Փայտերը՝մի քանիսը ածխացած, մի քանիսը օդի մեջ արձանացած, ասես կրակի էին սպասում: Նոր փայտիկներ վերցրեց, գեղեցիկ, համաչափ իրար վրա շարեց: Նայեց. իրեն դուր եկավ: Դանդաղ վերցրեց լուցկին, վառեց,մոտեցրեց բարակ տաշեղիկներին: Ինքն իր շարժումներին ասես հետևում էր կողքից և գոհ էր: Հարմար տեղավորվեց բուխարու դիմաց և նորից լուցկի վառեց:Կրակը դժվարությանբ կպավ:Սկզբում հևալով, վառվում-մարում էր, ապա շունչ առավ, բռնկվեց:Դեղնակարմիր տաք ալիքները հիմա

արդեն գալարվում էին, անկաշկանդ պարում՝ճարճատյունով,ծեքծեքալով. տան սառցե լռությու՞նն էին ցրում :

Գինու շիշը դեռ երեկվանից ընկած էր գետնին: Արևիկը մեկնվեց, վերցրեց, երկար պտտեց ձեռքերում, ապա դանդաղ վեր կացավ, տարավ դրեց տեղը: Վերադարձավ, խալաթի փեշերը իրար վրա բերեց և կծկվեց նույն տեղում: Հայացքը հառեց հիմա արդեն լիաթոք շնչող կրակին : Բայց ինքն ասես էլ չէր շնչում, հոգում դատարկություն էր:Միայն սև-սև աչքերի մեջ կարմիր կրակներ էին բոցկլտում… Կախարդվածի նման երկար մնաց այդ դիքում . չէր կարողանում հայացքը պոկել տաք քուլաներից: Էլի մի քանի փայտիկներ ավելացրեց , ապա ձգվեց ու վրան քաշեց ճոճաթոռի ծածակոցը:Մի ընդարմացնող ջերմություն նրան պարուրեց, տարա՛վ:Կոպերը ծանրացա՛ն, ծանրացա՛ն ու անզոր փակվեցին…

Արթնացավ ինչ-որ ուրախ գեղգեղանքից: Նայեց ձայնի ուղղությամբ: Արևը փռվել էր պատուհանագոգին, ու հենց այդ կողմից էին լսվում երգեցիկ հնչյունները: Ուղղվեց, ուզեց բարձրանալ, բայց ցավ զգաց մարմնում, զգաց նաև արդեն ծանոթ հոգու հիվանդության շունչը: Ասես դրանիզ ազատվելու համար թափով վեր կացավ : Մոտեցավ պատուհանին: Թեթև ժպիտ հայտնվեց սառած շուրթերին: Այո՛,դրսում՝ պատուհանի գոգին, գունագեղ թռչունները ժիր -ժիր ծլվլում էին,թռվռում:Ցուրտ էր, բայց հոգ չէ. փոքրիկ ճնճղուկները ուրախ էին, տաք տեղ էին գտել ու երջանիկ էին: Ձեռքը հպեց պատուհանին, կարծես ուզում էր նրանց դիպչել: Իսկ թռչունները (նրան չտեսա՞ն, թե՞ չկարևորեցին էլ), իրենց աշխարհում երջանիկ, ծլվլում էին՝ իրար հերթ չտալով:Տեսնես ի՞նչ էին

ասում:Թեթև թխկացրեց պատուհանը: Մի պահ լռեցին, մի պահ միայն ու շարունակեցին իրենց աշխույժ ճռվողյունը: Ուրեմն չվախեցան իրենից: Արևիկը նորից ժպտաց՝ ավելի կենդանի,ավելի տաք:

- Հացի փշուրներ կարելի է լցնել:

Ու հիշեց՝ ինքն էլ արդեն որքան ժամանակ ոչինչ չի դրել բերանը, միայն դեղեր:

Մի տեսակ խղճաց իրեն: Մոտեցավ հայելուն: Մի՞թե ինքն է: Մի օտար , ցամաքած, մի քիչ կկոցած աչքերով, տխուր դեմք: Ի՞նքն է: Փորձեց ժպտալ: Այո՛, այտերին ծանոթ փոսիկները հայտնվեցին: Միայն թե մի տեսակ ձգված, երկարած:

-Դու՛ ես,- ինչ-որ ցավոտ սեր կար այդ ձայնի մեջ,-այս ի՛նչ ես դարձել:

Մոմե մատներով սկսեց դանդաղ շոյել դալուկ դեմքը՝ զգու՛յշ, քնքշորե՛ն,ասես վախենում էր ցավեցնել:

-Մենա՛կ ես, հա՛,-չէ, չի չարախնդում, երևի պարզապես զարմանում է. դեռ զարմանում է,- գնաց ու տարավ քո ամեն ինչը՝ ժպիտը, գեղեցկությունը, հոգիդ, ամեն-ամեն ինչդ:Քե՛զ: Դու չկաս: Չկա՛ս…

Արցունքներն անձայն-անաղմուկ գլոր-գլոր իջնում էին ցած: Նայում էր իրեն օտարի նման, նայում էր լացող աչքերին և զգում էր, որ խղճում է հայելուց իրեն նայող հարազատ դեմքին, խղճում է ու … սիրու՛մ, շա՛տ, շա՛տ է սիրում…

Լվացվեց, համբերատար չորացրեց անսանձ արցունքները: Նորից նայեց հայելուն, հանդիմանեց.

-Վե՛րջ: Հերի՛ք է:-Ի՞ր ձայնն էր, թե՞ ուրիշի.

Մտավ խոհանոց, սուրճ եփեց: Իր սիրելի սուրճի բույրը խլրտացրեց քիմքը: Այո՛, խանութ պետք է գնալ: Կում-կում , վայելելով խմեց տաք սուրճը: Ապա գնաց ննջարան, թեթև վրա բերեց անկողինը, երկար պրպտեց, ընտրեց իր գեղեցիկ շորերից մեկը, հագավ դանդաղ, ամեն ծալք ուղղելով ու դարձյալ մոտեցավ հայելուն: Կարգի բերեց իրեն, հարդարվեց, թեթև գույներ քսեց . սփրթնած դեմքին շունչ եկավ: Կախեց մեծ ականջօղերը: Ինքն իրեն դուր եկավ. ժպտաց: Տաք-տաք հագնվեց, վերցրեց փոքրիկ պայուսակը ու դուրս եկավ:

Դրսում ասես ոչինչ չէր փոխվել: Նույն եռուզեռն էր, նույն տխուր , մտահոգ դեմքերը: Այո՛, առաջին անգամ ուշադրություն դարձրեց, որ ուրախ մարդիկ քիչ կան: Տեսնես մյուսնե՞րն ինչու են տխուր:Ա՛յ, օրինակ, դիմացից եկող այն պապիկը տխուր է, որովհետև երևի թոշակով ապրելը դժվար է(երկար , կախ ընկած թափանցիկ տոպրակի մեջ մի քանի կարտոֆիլ կար միայն):Կանգ առավ:Պապիկը , ոտքերը զգուշորեն քարշ տալով, անցավ կողքով: Տխուր նայեց հետևից. նա գոնե թոշակ է ստանում: Իսկ դու՞: Դու ախր երբեք չես աշխատել, այնինչ թատերականի լավագույն ուսանողուհիներից էիր , և աշխատանք գտնելը քեզ համար խնդիր չէր: Բայց նա, նա՝ *ամուսինդ* (մի ցավոտ ժպիտ ձգեց շրթունքները), կտրուկ արգելեց: Առաջարկներ հետո էլ եղան, բայց քեզ համար

կարևորը նա՛ էր, նրա ցանկությունը, խոսքը: Եվ , ինչպես նա էր ասում, իրեն պահում էր թագուհու նման: Դարձյալ հայտնվեց մի ծռմռված ժպիտ և աղավաղեց գեղեցիկ դեմքը: Հոգին նորից սկսեց ցավել: Այդ կեղեքող զգացումը նորից տիրեց իրեն: Վախից սկսեց արագ քայլել, ասես ուզում էր փախչել իրեն հետապնդող սարսափելի մտքերից կամ գուցե շտապում էր կորցրածի՞ հետևից:

Ոտքերը տանում էին թատրոնի ուղղությամբ: Մի մոռացված, բայց հավատարիմ ու հարազատ օջախ ձգում էր իրեն:Սիրտը սկսեց ջերմորեն թպրտալ, իսկ մտքերը հաճելիորեն հանդարտվում էին: Քայլերն ավելի արագացրեց. համարյա վազում էր: Հանկարծ մի ձայն (կարծես ծանո՞թ) հետևից կանչեց.

-Արևի՞կ:

Կանգնեց, շրջվեց: Օ՜, իր ուսանողական ընկերն էր:

- Արմա՛ն:

Մինչ զարմացած կանգնել էր, տղան հասավ նրան, և ակամա գրկախառնվեցին՝ կարոտած հարազատների նման:

-Արևի՛կ, - ջերմությամբ նայեց աչքերին,-կորե՛լ ես, ավարտելուց հետո քեզ երբեք չեմ տեսել:

-Արմա՛ն,- մի քայլ հետ գնաց,- չես փոխվել ընդհանրապես:

- Իսկ դու,- ուզում էր ինչ-որ բան ասել, բայց չէր գտնում բառեր ու միանգամից հարցրեց,-ինչպե՞ս ես:

Արևիկը միայն սրտահույզ ժպտում էր: Արմանը նրա ժպիտի մեջ ցավ զգաց:

- Ինչ ավարտել ենք, քեզ չեմ տեսել:Այնպես կորար, որ էլ քեզ գտնել չեղավ: Միայն լսեցի, որ ամուսնացել ես ու մեզ մոռացել:

Վերջին բառերը կատակո՞վ ասաց, թե՞ հանդիմանանքով, Արևիկը չհասկացավ,միայն զգաց, որ աչքերի դեմ պատկերները պղտորվեցին, ու արցունքները ակամա սկսեցին գլորվել: Չէր էլ փորձում ինչ-որ բան թաքցնել, միայն ժպտում էր արցունքների միջից::

- Հազիվ բռնացրել եմ քեզ. դե հիմա պատմիր՝ ո՞նց ես, ի՞նչ ես անում,- Արմանը չէ՞ր ուզում, թե՞ չէր տեսնում Արևիկի արցունքները:

-Դե, ես…ես,-այլևս անկարող եղավ զսպել հեկեկոցը:Մի անմեկնելի մղումով նետվեց դեպի ընկերը , որն այդ պահին ամենահարազատ մարդն էր իր համար, գրկեց և բարձրաձայն լալիս էր երեխայի նման: Արմանը շփոթվել էր, չէր հասկանում՝ ինչ է կատարվում: Ձեռքերը զգուշությամբ բարձրացան, և մի ներքին ջերմությամբ գրկեց Արևիկին: Զգում էր, հասկանում էր՝ ինչ- որ վատ, անչափ վատ բան է կատարվել, բայց արդեն չէր համարձակվում խոսել:Միայն գրկել էր պինդ-պինդ, ասես երբեք էլ նրանց միջև չէր եղել տարիների անջրպետը:

- Լավ կլինի, հանգստացիր, այ կտեսնես՝ ամեն ինչ լավ կլինի,-կամաց , քնքշորեն շշնջաց ականջի տակ, կարծես փոքրիկ երեխայի էր սփոփում: Արևիկը անակնկալի եկավ, հետ քաշվեց:

- Կներես, կներես, ես էլ չհասացա, թե ինչ կատարվեց ինձ հետ: Երևի մեր ուսանողական կյանքն էի կարոտել, մեր թատրոնը,-երկու ձեռքերով ուժեղ սեղմելով սրբեց աչքերը,- քայլե՞նք:

Ու Արմանի ձեռքից բռնելով, ինչպես հաճախ անում էր ուսանողական տարիներին, առաջ ընկավ:

-Ասում ես՝ինչ կա թատրոնի՞ց,- գլուխը առաջ ձգած համարյա վազում էր՝ հետևից տանելով Արմանին:

- Ամեն ինչ լավ է,- արձագանքեց Արևիկի նման՝ բարձր ձայնով, հետևից իբր հազիվ հասնելով:

-Լավ է, որ լավ է:

-Լավ է , որ լավ է,- կրկնեց Արմանը: Ծիծաղեցին:Արևիկը ետ նայեց.Արմանի խուճուճները քամուց խառնվել էին ու ցցվել:Մատները խրեց մազերի մեջ:

-Սառել են մազերդ:

Արմանը դեռ ծիծաղում էր ,այնքան սրտանց , այնքան վարակիչ:Արևիկն էլ չդիմացավ:Ծիծաղում էր, իսկ աչքերից արցունքներ էին թափվում:Հոգին մաքրող արցունքներ…

Հետո սկսեցին դանդաղ քայլել:

-Արևի՛կ, թատրոնից լրիվ կտրվել ես,չէ՞:

-Չէ, ի՞նչ ես ասում,թատրոնը իմ աշխարհն է, իմ տարերքը:

- Այո՞,- հարցական նայեց:

Արևիկը ավելի վախեցավ. չլինի՞ Արմանը ավելի շատ բան գիտի, քան ինքը կարծում է:

-Գիտե՞ս,- շարունակեց Արմանը՝ քննախույզ նայելով Արևիկին,- ես իմ թատրոնն ունեմ: Դեռ նոր է, բայց ահագին խոստումնալից ,բավականին հաջողություններ ունենք: Դու չե՞ս լսել մեր մասին:

Արևիկն անգամ չգիտեր՝ինչ ասի: Բայց Արմանն անգամ պատասխանի չսպասեց:

- Կուզե՞ս գալ մեր թատրոն:

- Ի՞նչ,- Արևիկը դեռ շփոթված էր,- այո՛, իհարկե,կգամ:

-Չէ՛, ես լրիվ լուրջ եմ խոսում,- Արմանը կանգնեց, բռնեց Արևիկի ձեռքը, շեշտակի նայեց աչքերի մեջ,-կգա՞ս մեր թատրոնում աշխատելու:

Արևիկը շփոթված էր:Այսպիսի արագ շրջադարձ չէր սպասում:Մի պահ անգամ կարծեց, թե այդ ամենը երազ է, իրականություն չէ: Բայց Արմանը ,ահա, իրական ,կանգնած է իր դիմաց և կոնկրետ պատասխանի է սպասում: Արևիկն ավելի շփոթվեց: Մի ահավոր տագնապ նորից մխրճվեց սիրտը :

-Լավ, լավ,-հետ-հետ գնաց,-Արմա՛ն ջան, ես քեզ հետո կասեմ,լա՞վ, իսկ հիմա գնամ: Ես գնամ:

Արևիկը արագացրեց քայլերը: Ասես փախչում էր . Արմանի՞ց, թե՞ ինքն իրենից : Արմանը հետևեց նրան:Նա այլևս համոզված էր՝ Արևիկը մեծ ցնցումների մեջ է: Նա անասելի ցավ էր զգում Արևիկի՝ իրենց կուրսի ամենաշնորհալի,ամենաուրախ աղջկա համար :

- Սպասի՛ր, Արևի՛կ, հեռախոսիդ համարն ասա գոնե, թե չէ էլի կկորես,-և՛ համարյա վազում էր հետևից, և՛ գրպաններում հեռախոսն էր փնտրում…ու չէր գտնում,-համարդ ասա, Արևի՛կ:

Արևիկին կանգնեցնելն այլևս անհնար էր, անիմաստ:Բնավորության այդ գիծը չէր փոխել:Կանգնեց, ձայնեց.

- Համա՛րդ:

Արևիկը ,որ մի քիչ առաջ էր ընկել, շրջվեց, արագ-արագ ասաց համարը (գուցե որ Արմանը էլ չհետևի՞ իրեն) և վազեց : Բավականին հեռացել էր ,նորից կանգնեց, շրջվեց. Արմանը նույն տեղում, նույն դիրքով դեռ կանգնած էր: Արևիկի սիրտը ճմլվեց: Գլխիկոր արագացրեց քայլերը : Նորից մի խուլ հեկեկոց քանդում էր հոգին, տակնուվրա անում…

Համարյա հասել էր իրենց շենքին: Ինչպե՞ս էր հասել, ինքն էլ չէր զգացել:Դանդաղեցրեց քայլերը, մոտեցավ կրպակին, մի քանի կարկանդակ գնեց և բարձրացավ տուն:

Աստիճաններով բարձրանալիս մի զարմանալի թեթևություն զգաց : Հասավ իրենց դռանը: Դուռը բաց էր: Նորից: Բայց կարծես թե փակել էր:Մտավ ներս, հանեց վերարկուն: Մի տեսակ հարազատ հոգնություն իջավ վրան: Հենվեց պատին: Հանեց կոշիկները: Կախեց վերարկուն: Դանդաղ, մեկ-մեկ պատին դիպչելով՝ հասավ խոհանոց: Կարկանդակները դրեց սեղանին: Ուզեց խոհանոցից դուրս գալ, բայց հետ դարձավ, վերցրեց տաք-տաք կարկանդակներից մեկը: Կծեց: Դանդաղ ծամեց. համեղ էր:Բույրն էլ լավն էր:

Կարելի է սուրճ էլ եփել:Դառը շոկոլադով խմել…Ինքն իր վրա քմծիծաղեց։ Այո՛, այո՛, իսկ ինչու՞՝ ոչ: Պետք է սուրճ եփել և այն էլ՝ իր սիրած ձևով՝ բուխարու մեջ: Այո՛:

Սրճեփը ձեռքին՝ մտավ սենյակ…Ծաղիկների մի շքեղ փունջ(իր սիրած քրիզանթեմները) դրված էր սեղանին: Քարացավ - մնաց: Թափառիկ մի հայացք գցեց սենյակով. զգաց…ՆՐԱ ներկայությունը…

Շփոթվեց, բայց մի քանի վայրկյան միայն:Ապա մի աներևույթ ուժ իրեն առաջ մղեց: Իր համար էլ զարմանալի մի հանդարտությամբ մոտեցավ բուխարուն, սրճեփը դրեց փափուկ մոխիրի վրա ու սկսեց փայտիկները զգույշ, համաչափ շարել իրար վրա: Ոչինչ, ոչինչ չէր զգում, միայն ականջներն էին սաստիկ խշշում: Այդ ե՞րբ սկսվեց…Սիրտն էլ ասես տեղից պոկվել է ուզում, ու բանտված տրոփյունը արձագանքվում է քունքերում: Իսկ ինքը դեռ դանդաղ, խնամքով իրար վրա է շարում փայտիկները:Ու նորից կարծես ինքն իրեն տեսնում էր կողքից։

Հանկարծ անսպասելի մի զանգ հնչեց: Թվում է՝ դրան էր սպասում, բայց վախեցավ:Համակ ուշադրություն դարձած՝ ձգեց երկար վիզը: Հեռախոսի զանգը նորից հնչեց: Փրկվածի նման շրջվեց դեպի ձայնը:Մի պահ չէր կողմնորոշվում, թե որտեղից է գալիս: Հեռախոսը հուսահատ նորից կանչեց: Ահա, ահա, պատուհանի մոտ՝ գետնին , այդ երբվանի՜ց ընկել- մնացել է: Թափով հասավ հեռախոսին, կռացավ, որ վերցնի, մի ծանոթ,բայց օտա՛ր ձեռք իրենից առաջ ընկավ:Վերցրեց հեռախոսը ու մեկնեց իրեն:Արևիկը

բարձրացրեց գլուխը,հայացքները խաչվեցին : Մի պահ, մի ակնթարթ միայն: Արևիկը խլեց ձեռքից հեռախոսը ու նետվեց միջանցք: Հեռախոսը դեռ հուսահատ զանգում էր: Միացրեց:

-Հաաա, Արմա՛ն, դու՞ ես,-ձայնն էլ էր փոխվել, կարծես խզվել էր:-Կգամ, իհարկե կգամ:Ինչու՞ վաղը , հիմա կգամ, հենց հիմա: Հիմա:

Ու սկսեց այնքան արագ հագնել կոշիկները , ասես փախչու՛մ էր:

-Ո՞ւր, ո՞ւր,ո՞ւր ես գնում,-ծանոթ –անծանոթ ձայնը փորձում էր կանգնեցնել: Բայց Արևիկը ոչինչ չէր լսում: Խեղդվողի նման , ասես փրկվելու համար ուզում էր դուրս նետվել.:

-Սպասի՛ր,- տագնապած, հուսահատ մի ճիգով փակեց ճանապարհը: Հայացքները նորից բախվեցին: Շանթահարվածի նման՝ պոկեց կախիչից վերարկուն և դուրս թռավ…

-Լսի՛ր,- ձայնն ավելի թույլ էր, խեղճացած ու խլացավ կոշիկների ուժեղ կտկտոցից:

Բայց ականջներում դեռ արձագանքվում էր՝ սպասի՛ր…լսի՛ր…Մոլորված, տագնապած ու նաև, տե՛ր Աստված,հարազատ ձայնը: Սիրտը նվաղեց:

Սառը քամին միանգամից խփեց դեմքին, ուշքի բերեց: Օ՛, ի՛նչ հաճելի է այս թաց քամին: Ի՛նչ տաք է այս սառը օդը:

Արևիկը արագ քայլում էր, չէ՛, վազում էր, թռչու՛մ էր՝ գեղեցիկ խոպոպները քմուն տալով, գլուխը քիչ հետ ձգած: Իսկ վերևում՝ իր պատուհանի անկյունում քիչ-քիչ փոքրացող մի ուրվագիծ էր սառել՝

թռչունների ուրախ համե՞րգն էր լսում, թե՞ հորիզոնի անհունում ձեռքից բաց թողած թռչունին էր փնտրում…

՛

ԹՌԻՉՔ (նովել)